Ը Ն Դ Հ Մ Ե Մ Ը	154	15272250

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ

Սահակյան Գեորգի Հրանտի, ֆ.մ.գ.թ., դոցենտ

Հիմնական գործառնություններ

- Բակալավրիատի որոշ կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերամշակման գործընթացի կազմակերպում,
- ուսումնական գործունեության օրացույցի մշակում և վերահսկում,
- դասախոսների ծանրաբեռնվածությունների հաստատում և կատարման վերահսկում,
- ֆակուլտետների դեկանատներին և ամբիոններին մեթոդական օգնության ցուցաբերում,
- ուսումնական գործընթացի փաստաթղթային գործունեության վերահսկում,
- ընթացիկ և եզրափակիչ ստուգումների անցկացման վերահսկում,
- պետական քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում,
- ուսումնական, արտադրական և մանկավարժական փորձուսուցումների անցկացման ժամկետների հաստատում,
- փորձուսուցման մեթոդական աջակցության, մանկավարժական փորձուսուցման կազմակերպման ուղեցույցների և մանկավարժական փորձուսուցման ծրագրի մշակում, արտադրական և մանկավարժական փորձուսուցման նկարագրերի մշակում,
- ուսումնական գործընթացի կազմակերպման օպտիմալացման գործընթացի շարունակում,
- ավարտական աշխատանքների թեմաների ստուգում և համապատասխանեցում դրանց ներկայացվող պահանջներին,
- ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում,
- դասախոսի, ամբիոնի վարիչի և ֆակուլտետի դեկանի ուսումնական տարվա գործունեության գնահատման չափորոշիչների մշակում,
- ԱրՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում,
- հանդիպում ամբիոնների հետ՝ կապված ինստիտուցիոնալ և կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացի կազմակերպման և իրականացման վերաբերյալ
- ամբիոնների պրոֆեսորադասախոսական հաստիքային ֆորմուլյարի մշակում:

2017-2018 ուսումնական տարում վերամշակվել և հաստատվել են «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Լրագրություն» և «Իրավագիտություն» մասնագիտությունների բակալավրիատի կրթական ծրագրերի ուսումնական պլանները:

Ուսումնական աշխատանքների կանոնավոր ընթացքն ապահովելու նպատակով իրականացվել են ուսումնական գործընթացին վերաբերող անհրաժեշտ կանոնակարգերի և փաստաթղթերի մշակում, որոնք քննարկվել են ամբիոնների և ֆակուլտետների նիստերում, գիտական խորհրդում:

Շարունակվել են աշխատանքները առկա և հեռակա ուսուցման համակարգ էրում ուսումնական գործընթացի որակը և արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Շարունակվել է կրեդիտային ուսուցման գործընթացում կիրառվող՝ ուսանողների գիտելիքների ստուգման համակարգչային եղանակի գործընթացը: Կատարվել են որոշակի ծրագրային փոփոխություններ: Կազմակերպվել են դասընթացներ թեստաբանությունից՝ նպատակ ունենալով բարձրացնել թեստային առաջադրանքների որակը: Շարունակվել են աշխատանքները թեստային առաջադրանքների մշակման, կազմման և համակարգչային բազա մտցնելու ուղղությամբ: Այս ամենին զուգընթաց՝ անհրաժեշտ է նշել, որ դեռ կան անելիքներ թերություններն ու խոչընդոտները հաղթահարելու համար:

Պարբերաբար ստուգվել և քննարկվել են ընթացիկ և եզրափակիչ ստուգումների արդյունքները:

Հաստատվել են փորձուսուցման անցկացման ծրագրերը և ժամկետները: Հստակեցվել են փորձուսուցման անցկացման բազային դպրոցներն ու հիմնարկությունները:

Կրթության որակի բարելավման նպատակով հետևողական աշխատանքներ շարունակվեցին պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման, նրանց աշխատաժամայինների օպտիմալացման ուղղությամբ: Իրականացվել է դասախոսների ծանրաբեռնվածության բաշխման գործընթացը և կատարման վերահսկումը: Ինչպես նախորդ, այնպես էլ այս ուսումնական տարում շարունակվել է ամբիոնների համալրումը երիտասարդ մասնագետներով:

Կազմակերպվել են հանդիպումներ ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որտեղ քննարկվել են դասախոսությունների և գործնական պարապմունքների որակի բարձրացման վերաբերյալ հարցեր, ինչպես նաև կրեդիտային համակարգում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին:

Կազմվել և հաստատվել են օպտիմալ ժամանակացույցներ 2017-2018 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության համար, քննարկվել և ամփոփվել են արդյունքները:

Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը կազմակերպելու համար: Խորհրդատվության նպատակով կազմակերպվել է փոխայցելություն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ, որի ընթացքում մանրամասներ են քննարկվել են հավատարմագրման գործընթացի իրականացման աշխատանքները:

Նաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն շարունակվել է կապը ՀՀ և արտերկրի առաջատար բուհերի հետ: Նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ զգալիորեն աճել է հրավիրվող դասախոսների և on-line ռեժիմով դասախոսությունների անցկացման թիվը:

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՊՐՈԳՆՈՐ**
Ավանդյան Վալերի Միքայելի, պ.գ.դ., ԱրՊՀ պրոֆեսոր

2017-2018 ուսումնական տարում ԱրՊՀ գիտության և միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում իրականացված աշխատանքներն են.

- համակարգվել է բոլոր ֆակուլտետների գիտահետազոտական աշխատանքը, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության, գիտական ամսագրերի, գրադարանի և գիտական հրատարակչության բաժնի աշխատանքները.

- խթանվել է ուսումնական գործընթացում գիտական արդյունքների ներգրավումը.

- ապահովվել է համալսարանի միջազգային գործունեության կայուն զարգացումը՝ համալսարանի նպատակներին և ռազմավարությանը համապատասխան,

- կազմակերպվել է միջազգային համագործակցության համաձայնագրերի կնքում եւ վերահսկվել դրանց կատարման գործընթացը.

- ապահովվել է գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումների, ռեկտորի հանձնարարականների կատարումը գիտական աշխատանքների ակտիվացման ուղղությամբ:

Այսօր ԱրՊՀ-ն համագործակցում է արտասահմանյան շուրջ 40 բուհերի, հետազոտական և կրթական կենտրոնների հետ Եվրոպայում, Ամերիկայում, Ռուսաստանում և Հայաստանում:

Գործընկերային սերտ հարաբերություններ են ձևավորված Լյովենի կաթոլիկ համալսարանի (Բելգիա) հետ, որը մտնում է Times Higher Education-ի լավագույն 300 համալսարանների ցանկում: 2017-2018 ուսումնական տարում կնքվել է համագործակցության վեց պայմանագիր. 2017թ. նոյեմբերին՝ «Դասավանդիր Հայաստան» կրթական ծրագիրը համակարգողների, 2017թ. դեկտեմբերին՝ Բելգիայի Լյովենի կաթոլիկ համալսարանի, 2018թ. հունվարին՝ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, 2018թ. մարտին՝ Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկական համալսարանի, 2018թ. հուլիսին՝ Ուրալի պետական իրավաբանական համալսարանի, 2018թ. օգոստոսի 18-ին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների "Christians in Need"-ի հետ:

2018 թվականից գործող միջազգային պայմանագրերի շրջանակներում գործում է ամառային միջազգային ճամբարը՝ օտարերկրյա դասախոսների և ուսանողների մասնակցությամբ:

Գիտական կադրերի պատրաստման գործում կարևոր է գիտական հետազոտողի ինստիտուտի կայացումը: 2017-2018 ուսումնական տարում ասպիրանտուրա է ընդունվել 3, իսկ որպես հայցորդ ձևակերպվել՝ 2 շրջանավարտ: Ատեստավորվել են 4 ասպիրանտ և 18 հայցորդ:

Հետևյալ առարկաներից իրականացվել են հետազոտողի կրթական ծրագրեր.

Օտար լեզու, Գիտության փիլիսոփայություն, Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում, Հոգեբանություն, Մանկավարժություն, Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ, Հետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքներ:

Ուսումնական տարում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ-ում և արտերկրում կազմակերպված 26 գիտաժողովների:

Կրթության որակի բարելավման և կրթական գործընթացը միջազգային չափանիշներին հասցնելու կարևորագույն բաղադրիչներից մեկը գիտական սեմինարների անցկացումն է: Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի հինգ ֆակուլտետներում անց է կացվել 66 գիտական սեմինար, ընթերցում և քննարկում: Տպագրվել է 7 մենագրություն, 21 մեթոդական, 8 ուսումնամեթոդական ձեռնարկ, 213 գիտական հոդված: Հրատարակվել են նաև «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» (հասարակական և բնագիտական ուղղություններով) հանդեսը, Շուշիի ազատագրման 25-ամյակին ու Ղարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված գիտական ընթերցումների ժողովածուները:

Ոչ ֆորմալ կրթության շրջանակներում համալսարանի ուսանողների հետ հանդիպել են Բյուրականի աստղադիտարանի փոխտնօրեն Հայկ Հարությունյանը, Ֆրոնցիայում բնակվող հայտնի քանդակագործ Միքայել Օհանջանյանը, Երևանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր Դավիթ Մուրադյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանը, լիտվացի նշանավոր սոցիոլոգ Ռասսա Ալիսաուսկենեն, լրագրող Ռուբեն Միրաբյանը: Դասախոսություններով հանդես են եկել նաև Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի պրոֆեսոր, ի.գ.դ. Ստեփան Ծաղիկյանը, ՀՀ Աժ խորհրդարանականներ Արմեն Բեքարյանը, Հրայր Թովմասյանը, Միհրան Հակոբյանը, Արմեն Սաղաթելյանը, ԵՊՀ պրոֆեսոր, պ.գ.դ. Սամվել Պողոսյանը, «Կովկաս» ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանը, գերմանացի դիվանագետ Հանս Յոխսեն Շմիդտը, հունգարացի պատմաբան Կովաչ Բելինտոմը, կանադացի վերլուծաբան Դարիլ Քոփլենդը, կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Պոլ Վան Բյուսը և ուրիշներ:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ *Յարամիշյան Վիտյա Բենիկի, հ.գ.թ., դոցենտ*

Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքներն ԱրՊՀ-ում իրականացվել են նպատակային, համակարգված և հետևողական, ինչի շնորհիվ գրանցվել են զգալի հաջողություններ: Լյանքի են կոչվել այն մտահղացումներն ու ծրագրերը, որոնք մշակված են եղել ինչպես համալսարանի զարգացման 2013-2018թթ. ծրագրով, այնպես էլ 2017-2018 ուսումնական տարվա հանրային նշանակության միջոցառումների պլանով:

Լյարևոր քայլեր են ձեռնարկվել ուսանողների ներքին կազմակերպվածության ու պատասխանատվության բարձրացման, ուսումնական գործունեության նկատմամբ դրական վերաբերմունքի ամրապնդման ուղղությամբ: Համահայկական կրթական դաշտում բարձրացել է ԱրՊՀ ճանաչվածությունը, ինչի մասին են վկայում տասնյակ պետական ու քաղաքական գործիչների, գիտության ու գործարար աշխարհի հեղինակավոր ներկայացուցիչների բազում այցելությունները, համագործակցային կապերի ամրապնդումը գործընկեր բուհերի հետ:

Ուսումնական տարին գերիազնցած է եղել տարաբնույթ միջոցառումներով: Միայն սեպտեմբեր ամսում կազմակերպվել է թվով 13 միջոցառում: Հետագա ամիսներին միջազգայնական կազմակերպման այդ խտությունը ոչ միայն չի նվազել, այլև աճել է՝ որոշ դեպքերում ստանալով համապետական ու համահայկական հնչեղություն: Այդպիսի ծրագրերից էին «Ուսանող-աշակերտ-զինվոր. միասնության ուժը» փառատոնը, համահայկական ուսանողական գիտաժողովը և ֆորումը՝ ՀՀ առաջատար բուհերի մասնակցությամբ, և ամառային միջազգային ճամբարը՝ Պատարա գետի հովտում:

«Ուսանող, աշակերտ, զինվոր» միջոցառումը ԱրՊՀ-ում երբևէ կազմակերպված ամենահաջող ծրագրերից մեկն էր: Այն տևել է շուրջ երեք ամիս՝ ընդգրկելով ԱՀ ողջ տարածքը և ապահովելով բացառիկ մասայականություն: Ծրագրին մասնակցել են հարյուրավոր ուսանողներ, զինվորներ և մի քանի տասնյակ դպրոցների աշակերտներ: Կազմակերպվել են հանդիպումներ, բարեգործական համերգային ծրագրեր, երթեր, ինտելեկտուալ փառատոններ: Գործնական ընթացք է տրվել բուհ-դպրոց համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթին, որի հիման վրա դպրոցների հետ ունեցել ենք տասնյակ հանդիպումներ:

Ուսումնական տարվա ընթացքում ԱրՊՀ ուսանողների հետ հանդիպումներ են ունեցել ինչպես հայազգի պետական, քաղաքական, ռազմական, մշակույթի ու գիտության, այնպես էլ արտերկրի ճանաչված գործիչներ՝ ուկրաինացի ֆիզիոլոգ Օ.Լյուիշտալը, իսպանացի դիվանագետ Շոն Ռիորդանը, գերմանացի դիվանագետ Լարս Պատրիկ Բերգը, ղեկավար Հանս Յոխսեն Շմիդտը, ամերիկացի ցեղասպանագետ և իրավաբան Շրվոն Նաշ Մարշալը, ռուս հրապարակախոս Միխայիլ Դեմուրի-նը, ֆրանսիացի կինոպրոդյուսեր Ռիքիենին, ցեղասպանագետ Ֆոն Բլումը, «Ավրորայի» մրցանակակիր, բժիշկ Թոմ Կատինան:

ԱրՊՀ-ն գտնվել է երկրի իշխանությունների հոգածության ներքո: ԱՀ նախագահ Բ.Սահակյանն իր նստավայրում ընդունել և գերազանցության դիպլոմներ, արժեքավոր նվերներ է հանձնել բակալավրիատը գերազանցությամբ ավարտած շրջանավարտներին: Մագիստրոսների դիպլոմներին հանձնման հանդիսավոր արարողությունը կազմակերպվել է ԱրՊՀ-ում:

Ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի կարևոր միջոցառումները եղան Ղարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված համահայկական ուսանողական գիտաժողովը և ֆորումը, որոնք ունեին հավակնոտ նպատակներ՝ միավորել հայկական բուհերի ուսանողներին համազգային գաղափարների շուրջ, արժևորել պետականակերտման 30-ամյա ուղին և ձեռքբերումները, բացահայտել խնդիրները՝ կրթական և երիտասարդական քաղաքականության ոլորտում, նպաստել միասնական հայրենիքի զարգացմանը: Ֆորումի արդյունքում ընդունվել է հայտարարություն:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների հանրային կապերի և լրատվության բաժնի մասնակցությամբ կազմակերպվել և անց են կացվել ռեկտորի հանդիպումներն ուսանողների հետ, «Տարվա լավագույն ուսանող» մրցույթը, ուսանողների միջազգային օրվան նվիրված միջոցառումների շարքը և այլն: ԱրՊՀ-ում լայն թափ է ստացել ինտելեկտուալ շարժումը, որի շրջանակներում տարբեր թեմաներով խաղ-մրցույթներ են անցկացվել բոլոր ֆակուլտետներում և հանրակացարանում:

Ուսումնական տարին աչքի է ընկել նաև ուսանողական աշխատանքների ոլորտում նորույթ հանդիսացող ուղղությունների ներդրմամբ: Միջոցառումների մեծ մասը եղել են ուսանողական գիտաժողովներ, գիտական ընթերցումներ, սեմինարներ, կյոք սեղաններ: Աննախադեպ նորարարական երևույթ կարելի է համարել ուսանողի միջազգային օրվան նվիրված մրցույթների և տարաբնույթ միջոցառումների շարքը, որոնց արձագանքները տարածվել են բուհի սահմաններից դուրս:

Ուշադրության կենտրոնում են եղել այնպիսի կարևոր ուղղություններ, ինչպիսիք են հոգևոր-հայրենասիրական, բնապահպանական մարզամշակութային միջոցառումները՝ մրցումները, ծանոթության ներկոները, ստեղծագործողների մրցույթները, հուշ-ցերեկույթները:

Ուսումնական տարվա ընթացքում համալսարանում ստեղծվել են նոր կառույցներ՝ հոգևոր-նական կենտրոնը և իրավաբանական կլինիկան, որոնք տարաբնույթ ծառայություններ են մատուցել այցելուներին՝ կազմակերպելով դասընթացներ: Ուսանողական ամառը արդյունավետ է եղել: Զգալի թվով ուսանողների փորձուսուցումը համատեղվել է նրանց հանգստի հետ՝ Պատարայի ճամբարում, որին մասնակցել են նաև գործընկեր բուհերի տասնյակ ուսանողներ, այդ թվում՝ արտերկրից: Ուսանողները մասնակցել են այլ բուհերի ամառային դպրոցներին (ՀՊՏՀ-ի Դիլիջանի հանգստավայր, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի Աղավնաձորի միջազգային ճամբար, ՄԵՀԶ նախարարության կազմակերպած ֆորում):

Լրատվամիջոցներում ինտենսիվորեն լուսաբանվել է ԱրՊՀ ներքին և արտաքին կյանքը: Սահմանված պարբերականությամբ տպագրվել են «Արցախի համալսարան» պաշտոնաթերթը, «Քո ժամանակը» ուսանողական թերթը, asu.am պաշտոնական կայքէջում տեղադրվել է ավելի քան 200 նյութ՝ ռուսերեն և անգլերեն թարգմանություններով, սոցիալական ցանցեր են ներքենվել նույն-քան նյութեր՝ լուսանկարներով, հաճախ՝ նաև տեսահոլովակներով:

Ուսումնական տարվա ընթացքում նպատակային աշխատանքներ են կատարվել շրջանավարտների և հասարակայնության ներկայացուցիչների հետ: Ձեռնարկվող բոլոր միջոցառումների հիմնական նպատակը ուսանողների հետ տարվող աշխատանքների կատարելագործումն էր, ուսանողամետ և ուսանողակենտրոն ուսուցման ամրապնդումը:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ

Առուշտյան Կարեն Վաչեայավի

Ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարի, այս տարին ևս նշանավորվել է նոր ձեռքբերումներով: Ծառույնակվել են համալսարանի նյութատեխնիկական բազայի հարստացումն ու մասնաշենքերի ընթացիկ նորոգման աշխատանքները:

Հիմնական մասնաշենքի կապիտալ վերանորոգմամբ պայմանավորված՝ 2018թ. փետրվարից սկսվել են այլ մասնաշենքեր և պահեստներ նշված մասնաշենքի ապրանքանյութական արժեքների տեղափոխման աշխատանքները: 2018-2019 ուսումնական տարվա դասընթացներն ու աշխատանքները սահմանված ժամկետներում իրականացնելու համար աշխատանքներ են կատարվել վարչական, 2-րդ, 3-րդ և հանրակացարանի մասնաշենքերում լրացուցիչ աշխատասենյակների, լաբորատորիաների և լսարանների ապահովման ուղղությամբ: Բոլոր մասնաշենքերի միջանցքները միջնապատերի միջոցով վերածնվել են որպես աշխատասենյակներ և լսարաններ, 2018թ. փետրվար-մարտ ամիսների ընթացքում կապիտալ վերանորոգվել է 3-րդ մասնաշենքի 2-րդ հարկի 3 սենյակ և միջանցքը, հանրակացարանի 4 սենյակ և միջանցքը, 2018թ. ապրիլ ամսվա ընթացքում՝ վարչական մասնաշենքի 1-ին հարկի 2 սենյակ, 2018թ. մայիս-հուլիս ամիսներին՝ 3-րդ մասնաշենքի 1-ին հարկի 4 սենյակ և միջանցքը, ուսանողների կենցաղյան պայմանները բարելավելու նպատակով 2018թ. դեկտեմբերից սկսվել են հանրակացարանի 2-րդ մուտքի 5-րդ հարկի երկու մասնաբաժինների և միջանցքների վերանորոգման աշխատանքները:

2018թ. ընթացիկ վերանորոգումներ են ընթացել բոլոր մասնաշենքերի լսարաններում, աշխատասենյակներում, միջանցքներում, պահակակետներում, կաթսայատներում, տանիքներում, նկուղներում:

2018թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում մասնակի փոխարինվել և վերանորոգվել է հանրակացարանի ջնշուցման համակարգը:

Աշխատանքներ են իրականացվել սեփական ջնշուցման ցանցի և կաթսայի նորոգման, կաթսայատան անխափան աշխատանքների ապահովման ուղղությամբ:

Բոլոր մասնաշենքերում մասնակի փոխվել են պատուհանների ապակիները:

Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ֆիզդաստիարակության և ՆԶՊ ամբիոնի դասընթացները նորմալ կազմակերպելու համար 2018թ. ընթացքում ձեռք է բերվել 37200 դրամի մարզական գույք:

Հարավային Կովկասի շվեյցարական հիմնադրամի և այլ դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորմամբ «ԱրՊՀ ուսանողների և դասախոսների համար սպորտային խմբակներ կազմակերպում» ծրագրով ձեռք է բերվել 3579.2 հազ. դրամի մարզական գույք և սարքավորումներ, «Լենսաբանության արդիականացում Արցախում» ծրագրով ձեռք է բերվել 3110.0 հազ. դրամի լաբորատոր սարքավորումներ, «Ամառային դպրոցների կազմակերպում ԱրՊՀ, ՀՀ ու արտերկրի բուհերի ուսանողների մասնակցությամբ» ծրագրով ձեռք է բերվել 1900.0 հազ. դրամի վրան, քնապարկ, ներքնակ:

Արդեն երկրորդ անգամ ԱրՊՀ և «Կովկասի ինստիտուտ» հիմնադրամի միջև կնքված պայմանագրի շրջանակներում օտար լեզվի ուսուցման ծրագրի շրջանակում ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա 362000 դրամ արժողությամբ:

ԱՀ Արտաքին գործերի նախարարության և ԱրՊՀ համագործակցության շրջանակներում համալսարանում բացվել է Ա.Նույկինի անվան կաբինետ, որի համար ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա 750000 դրամ արժողությամբ:

2017-2018 ուսումնական տարում ձեռք է բերվել նաև 1996000 դրամի կահույք, 2945000 դրամ արժողությամբ համակարգչային տեխնիկա (որից 6 հատ համակարգչային կոմպլեկտ 1335000 դրամ արժողությամբ), 282700 դրամ արժողությամբ դեղորայք:

Անձնակազմի սպասարկման բաժնի միջոցով մշտական աշխատանքներ են տարվում համալսարանի մաքրության, սանիտարահիգիենիկ վիճակի, կարգուկանոնի պահպանության և բակի ու պարտեզների բարեկարգման ուղղությամբ:

2018թ. ընթացքում ԱրՊՀ հյուրասենյակի ծառայությունից օգտվել է 127 անձ, և կենցաղյան օրերը կազմել են 318 օր, ինչը 2017թ. համեմատ աճել է 53 մարդով, իսկ հյուրասենյակներում մնացած օրերի թիվը՝ 2 անգամ:

ԱրՊՀ մարզադահլիճները շարունակել են ծառայել ինչպես համալսարանի համար որպես ուսումնաժամանցային միջոցառումների վայր, այնպես էլ ԼՂՀ վոլեյբոլի, բասկետբոլի, հանդբոլի, աթլետիկայի ֆեդերացիաների մարզումների, տարաբնույթ քաղաքային, հանրապետական, միջբուհական, համահայկական սպորտային միջոցառումների կազմակերպման վայր:

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Մարգարյան Գայանե Գեորգիի կ.գ.թ., դոցենտ

2017-2018 ուսումնական տարում ԱրՊՀ-ում հրավիրվել է գիտական խորհրդի թվով 15 նիստ և քննարկվել օրակարգային 79 հարց, որից 29-ը՝ կանոնակարգային: Համալսարանում կատարվող կանոնակարգային փոփոխությունները, նոր կարգերի մշակումը, ընդունումը և կիրառումը միտված են ուսումնագիտական գործունեության բարելավմանը: Գիտխորհրդի կողմից ընդունված բոլոր որոշումները հասանելի էին ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմին և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներին:

Համալսարանի /2017-2018թթ./ զարգացման ծրագրի շրջանակներում կատարված կառուցվածքային փոփոխությունների, ինչպես նաև մի շարք ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնավարման ժամկետների ավարտմամբ պայմանավորված՝ կազմակերպվել են ամբիոնի վարիչների և ղեկանների ընտրություններ և վերընտրություններ, համակարգվել դրանց ընթացակարգն ու արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում ԱրՊՀ-ում 2 անգամ հայտարարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների մրցույթ, ըստ որի՝ կազմակերպվել և անց են կացվել ընտրություններ ավագ դասախոսի, դոցենտի և պրոֆեսորի թափուր պաշտոնների համար:

2017-2018 ուսումնական տարում շարունակվել է ակտիվ համագործակցությունը համալսարանի ստորաբաժանումների և ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի հետ: Դոցենտի գիտական կոչումները հաստատելու, ինչպես նաև համապատասխան դիպլոմներով ամրագրելու նպատակով ՀՀ ԲՈԿ է ներկայացվել 6 հայտ: Ներկայացված բոլոր հայտերը բավարարվել են, և հայտատուների գիտական կոչումները հաստատվել ու ամրագրվել են դիպլոմներով:

ԱրՊՀ բարձրորակ մասնագետների պատրաստման, կրթության և գիտության ոլորտում ունեցած ավանդի համար ֆիզմաթ.գ.թ. Սպարտակ Գևորգի Ռաֆայելյանին և ֆիզմաթ.գ.թ. Սվետլանա Ավանեսի Ավետիսյանին գիտխորհրդի որոշմամբ շնորհվել է ԱրՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում:

ԱրՊՀ զարգացման գործում ունեցած ավանդի համար ֆիզմաթ. գ.թ. Արթուր Բաբկենի Թովմասյանը և Հարավային կովկասի շվեյցարական հիմնադրամի տնօրեն Ֆիլիպ Էգերը պարգևատրվել են «ԱրՊՀ ոսկե մեդալ»-ով:

Տպագրության են ներառվել «ԱրՊՀ գիտական տեղեկագիրը», Ղարաբաղյան շաբաթան 30 ամյակին նվիրված՝ ԱրՊՀ-ում կազմակերպված միջազգային գիտաժողովին ներկայացված գեղուցումների ժողովածուն, շուրջ երկու տասնյակ գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են հայցորդների և ասպիրանտների գիտահետազոտական գործունեությունը խթանելու ուղղված աշխատանքները: Հաստատվել են դոկտորական առնչախոսության 1 թեմա, ինչպես նաև հայցորդների, ասպիրանտների ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանները:

Ակտիվ և թափանցիկ էր ԱրՊՀ գիտխորհրդին կից գործող մշտական հանձնաժողովների աշխատանքը, դրանց ծրագրերը և հաշվետվությունները կիսամյակային կտրվածքով հաստատվել են գիտխորհրդում: Գիտխորհրդի նիստերում պարբերաբար ներկայացվել են նաև ամբիոնների վարիչների, ինչպես նաև գրադարանի վարիչի տարեկան հաշվետվությունները:

ԱրՊՀ մի շարք դասախոսներ և ուսանողներ ներգրավվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և ԱՀ ԿԳՍ նախարարության կողմից ֆինանսավորվող պայմանագրային գիտական թեմաների կատարման խմբերում:

Կատարված աշխատանքները միտված էին համալսարանի գիտական ներուժի բացահայտմանը և գիտական մտքի ձևավորմանն ու զարգացմանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Մրցութային հանձնաժողով

Հաշվետու ժամանակաշրջանում ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների համալրման համար համալսարանը 3 անգամ հայտարարություն է տվել (11 դոցենտի և 2 ամբիոնի վարիչի), որի հիման վրա կազմակերպվել և անց են կացվել ընտրություններ: ԱրՊՀ-ում գործող կարգերի համապատասխան՝ մրցութային հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում ուսումնասիրվել և տրվել է համապատասխան եզրակացություն մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաթեթների վերաբերյալ:

Աշխատանքները շարունակական բնույթ են կրում՝ հաշվի առնելով, որ դրանք կապված են ԱրՊՀ-ում պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների անցկացված մրցույթների հետ:

Ներքին կանոնակարգների մշակման հանձնաժողով

Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել, տարբեր հանձնաժողովներում քննարկվել և գիտ-խորհրդի հաստատման են ներկայացվել՝

1. Ակադեմիական ազնվության և անազնվության կանոնակարգը.
2. ԱրՊՀ ՊՈԱԿ մանկավարժական փորձուսուցման կազմակերպման ուղեցույցը և արտադրական ու մանկավարժական մասնագիտությունների համար փորձուսուցման նկարագրերի նմուշները.
3. ԱրՊՀ էթիկայի կանոնագիրքը.
4. Արցախի պետական համալսարանում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգը.
5. ԱրՊՀ-գործատու համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատակարգը.
6. ԱրՊՀ ՊՈԱԿ մանկավարժական փորձուսուցման մեթոդական աջակցության ուղեցույցը.
7. ԱրՊՀ բակալավրիական ուսուցման կուրսներում դասավանդվող մոդուլներից, դասավանդող դասախոսներից, սեմինարավարներից ուսանողի բավա վածության, ուսանողի կողմից մագիստրոսական ուսուցման որակի գնահատման հարցաթերթերը.
8. ԱրՊՀ ուսումնական հրատարակությունների ձևերը և նրանց ներկայացվող պահանջները.
9. ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական տեղեկագրի հրատարակման կանոնակարգը.
10. ԱրՊՀ ՊՈԱԿ հայցորդների ձևակերպման կարգը և ուժը կորցրած է ճանաչվել ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 31-ի N02-Լ որոշումը.
11. ԱրՊՀ ՊՈԱԿ գիտահետազոտական կենտրոնի կանոնադրությունը.
12. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն գիտական, մեթոդական և այլ գրականության հրատարակման կարգը.
13. ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում մասնագիտական ծառայությունների մատուցման և վճարների գանձման կարգը.
14. ԱրՊՀ ՈԻՆ և ՈԻԳԸ գործունեության գնահատման կարգը.
15. ԱրՊՀ մասին տեղեկատվության տարածման կարգը.
16. ԱրՊՀ ՊՈԱԿ գարգացման ռազմավարական ծրագիրը (2018-2023թթ.):

Միաժամանակ փոփոխություններ և լրացումներ են կատարվել գիտական խորհրդի նախկին որոշումներով հաստատված մի շարք կարգերում ու կանոնակարգերում:

Հանձնաժողովը աշխատանքներ է իրականացրել բոլոր կանոնակարգային փոփոխությունները գործող կարգերի մեջ խմբագրելու ուղղությամբ:

Նոր ընդունված կանոնակարգերը տեղադրվել են ԱրՊՀ ներքին ցանցում և պաշտոնական կայքում:

Ուսումնամեթոդական աշխատանքների հանձնաժողով

1. Քննարկվել և առաջարկություններ են ներկայացվել «Ուսանողների գիտելիքների համակարգչային թեստային ստուգման գործընթացի կանոնակարգում» փոփոխություններ կատարելու, ինչպես նաև «ԱրՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների կազմակերպման կարգի», «ԱրՊՀ-ում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգի», «ԱրՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգի», «ԱրՊՀ գիտական խորհրդին կից տնտեսություն-բուհ համա-

գործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատակարգի», «Ֆակուլտետի ղեկանի և ամբիոնի վարիչի գործունեության արդյունավետության հայտանիշների», «ԱրՊՀ որակի ներքին ապահովման հայեցակարգի», «ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի», «ԱրՊՀ առաքելության և նպատակների» եւ այլ իրավական ներքին ակտերի վերաբերյալ.

2. Մշակվել և քննարկվել են մանկավարժական և արտադրական փորձուսուցումների կազմակերպման և անցկացման գործընթացները, որոնց ուղղությամբ մշակվել և գիտլսորհրդի հաստատմանն են ներկայացվել «Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ուղեցույցը» և «Մեթոդիստի ուղեցույցը».

3. Իրականացվել է վերահսկողություն ուսումնական ստորաբաժանումների ուսումնամեթոդական գործընթացին առնչվող աշխատանքների կատարման նկատմամբ.

4. Ստուգվել է կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի լաբորատոր աշխատանքների կազմակերպման գործընթացը.

5. Հանձնաժողովի մասնակցությամբ ստուգվել են ամբիոնների որոշ աշխատանքներ և տրվել ցուցումներ՝

6. Քննարկվել և տպագրության են նրաշխարհվել ուսումնամեթոդական մի շարք ձեռնարկներ:

Գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողով

Ուսումնական տարվա ընթացքում հանձնաժողովի կողմից գումարվել է 5 նիստ, որոնցում քննարկվել են հետևյալ հարցերը.

1. Պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավունքի ամբիոնի ավագ դասախոս, իր.գ.թ., Ա.Վ. Թադևոսյանի «Միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններ» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության նրաշխարհելու հարցը.

2. Բնագիտական ֆակուլտետի կենսաբանության ամբիոնի ավագ դասախոս Ն.Ն.Դավթյանի «Կենսաբանության դերը սովորողների աշխարհայացքի ձևավորման գործընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության նրաշխարհելու հարցը.

3. Բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզվի ամբիոնի ավագ դասախոսներ Կ.Վ.Աղաբաբյանի և Կ.Գ.Սարգսյանի «Handbook for Physical Training» ձեռնարկը տպագրության նրաշխարհելու հարցը.

4. Պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավունքի ամբիոնի դասախոս, իր.գ.թ. Գ.Մ.Արզումանյանի «Հայցային վարույթը քաղաքացիական դատավարությունում» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության նրաշխարհելու հարցը.

5. Բանասիրական ֆակուլտետի գերմաներեն և ֆրանսերեն լեզուների ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ա.Է.Հայրապետյանի «Landeskunde. Rund um Deutschland» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության նրաշխարհելու հարցը.

6. Բնագիտական ֆակուլտետի քիմիայի ամբիոնի ավագ դասախոս, մ.գ.թ. Ա.Ա.Գրիգորյանի «Տիպային խնդիրներ» երկու մասից կազմված խնդրագիրքը տպագրության նրաշխարհելու հարցը.

7. Բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ Կ.Լ.Մարությանի և դասախոս Ե.Ս. Բալասանյանի «Հավանականությունների տեսության և մաթեմատիկայի վիճակագրության խնդիրների ժողովածու» մեթոդական ձեռնարկը տպագրության նրաշխարհելու հարցը.

8. Բանասիրական ֆակուլտետի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ն.Ա.Ավանեսյանի «Յնդասպանությունը և կորուսյալ հայրենիքի գաղափարը» մենագրությունը նրաշխարհելու տպագրության.

9. Բանասիրական ֆակուլտետի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի նախկին հայցորդ Ն.Ռ.Դավթյանի «Պետրոս Հաճյանի կյանքը և գործը» ուսումնասիրությունը տպագրության նրաշխարհելու հարցը.

10. Բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի դասախոս ֆ.մ.գ.թ., դոցենտ Լ.Ռ.Աբրահամյանի «Դասախոսություններ թվերի տեսությունից» ուսումնական ձեռնարկը տպագրության նրաշխարհելու հարցը.

11. Բնագիտական ֆակուլտետի կենսաբանության ամբիոնի դասախոս Կ.գ.դ., Հ.Գ.Գալստյանի «Սովորողների առողջության պահպանման հիմնախնդիրը. Նրա լուծման ուղիները Արցախում» մենագրությունը տպագրության նրաշխարհելու հարցը.

12. ԼՂՀ ԿԳՄ փոխնախարար, բ.գ.թ., դոցենտ Ա.Յու. Սարգսյանի «Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության» աշխատությունը տպագրության նրաշխարհելու հարցը.

Արտաքին կապերի և ուսանողների հետ տարվող աշխատանքների մշտական հանձնաժողով

2017-2018 ուսումնական տարում հանձնաժողովն առաջնորդվել է ուսումնական տարվա համար մշակված համապատասխան միջոցառումների պլանով, որում նախանշված են եղել տարաբնույթ միջոցառումներ և տարվա ընթացքում իրականացվել են՝ հիմքում դնելով Ղարաբաղյան շարժման 30-ամյակը և Հայոց պետականության վերակերտման 100-ամյակը.

1. Հանձնաժողովի նիստերում (թվով 5) քննարկվել են բազմաթիվ հարցեր՝ ուսանողների հասարակական ակտիվության գնահատման օբյեկտիվության բարձրացման, քննությունների և այլ ստուգումների միավորների հաշվարկման, ուսանողների ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի հաշվառման և այլնի վերաբերյալ: Արդյունքներն արձանագրվել և ներկայացվել են գիտական խորհուրդ.

2. Հանձնաժողովի անդամները մասնակցություն են ունեցել գիտական խորհրդին կից գործող մյուս հանձնաժողովների նիստերի քննարկումներին.

3. Ուսումնասիրվել են ուսանողների խնդիրները, որոնց լուծման վերաբերյալ մշակվել և ներկայացվել են առաջարկություններ.

4. Հանձնաժողովն աջակցել է ԱրՊՀ ուսանողական խորհրդին: Մայիս ամսում համատեղ նախապատրաստական աշխատանքների արդյունքում հրավիրվել է ուսանողական համագումար.

5. Կատարվել է նախկին կարգերի ու ընթացակարգերի կիրարկման արդյունավետության ուսումնասիրություն, անց են կացվել սոցիալ-հոգեբանական հարցումներ, արդյունքների հիման վրա մշակվել են առաջարկություններ՝ դրանց կատարելագործման ուղղությամբ.

6. Գործուն աջակցություն է ցուցաբերվել «Հոգեբանական կենտրոնի» աշխատանքներին.

7. ՀՀ առաջատար բուհերի հետ համատեղ կազմակերպվել են ամառային դպրոցներ և ճամբարներ, համահայկական ուսանողական գիտաժողով և ուսանողական ինքնավար կառույցների ֆորում.

8. Ակտիվ համագործակցություն է ծավալվել երիտասարդական տարբեր կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, ՊԲ զորամասերի հետ, կազմակերպվել են այցելություններ և հանդիպումներ, իսկ 2017թ. աշնանն ու ձմռանն իրականացվել է «Ուսանող-աշակերտ-օրհավոր. միասնության ուժը» ծրագիրը, որն աննախադեպ էր ուսանողական կյանքում.

Որակի ապահովման մշտական հանձնաժողով

Առաջնորդվելով 2017-2018 ուսումնական տարվա համար մշակված համապատասխան միջոցառումների պլանով՝ հանձնաժողովն իրականացրել է մի շարք աշխատանքներ՝ համագործակցելով համալսարանի կրթության որակի ապահովման և միջազգային հարաբերությունների բաժնի ինչպես նաև ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ.

1. Ուսումնասիրել և քննարկվել են ֆակուլտետների կողմից ներկայացված կրթական ծրագրերի մեջ արված փոփոխությունները, կատարվել առաջարկություններ.

2. Ուսումնասիրել են պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման կրթագիտական ծրագրի ընթացքը և ներբուհական դասախոսումները, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը և որակը.

3. Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի շրջանակներում իրականացվել են դասախոսների անձնական գործերի ստուգումներ.

4. Ուսումնասիրվել են ուսանողության շրջանում կատարված հարցումների արդյունքները և ներկայացվել առաջարկություններ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Մարգարյան Լուսինե Գեորգիի, բ.գ.թ., դոցենտ

Ֆակուլտետի մասնագիտությունները և կրթական ծրագրերը

Բակալավրիատ

030600	Լրագրություն
031000	Հայոց լեզու և գրականություն
031300	Անգլերեն լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն
023201.00.6	Լեզվաբանություն
023201.01.6	Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն լեզուներ)
032101.00.6	Լրագրություն
032101.01.6	Լրագրություն

Մագիստրատուրա

031000	Հայոց լեզու և գրականություն
031300	Անգլերեն լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
023101.00.7	Հայոց լեզու և գրականություն
023101.03.7	Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն
023101.07.7	Հայ գրականության պատմություն
023102.00.7	Օտար լեզու և գրականություն
023102.08.7	Ռուսաց լեզու
023102.09.7	Անգլերեն լեզու
023102.15.7	Ռուս գրականություն
032101.00.7	Լրագրություն
032101.01.7	Լրագրություն

Մասնագիտություն, կրթական աստիճան	Ուսանողների թիվը՝ 647									
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս		V կուրս	
	անվճ.	վճ.	անվճ.	վճ.	անվճ.	վճ.	անվճ.	վճ.	անվճ.	վճ.
Բակալավրիատ. Առկա ուսուցման համակարգ (ուսանողների թիվը՝ 444)										
Հայոց լեզու և գրակ.	10	33	15	27	12	29	11	9		
Լրագրություն	5	8	5	8	5	2	6	4		
Անգլերեն լեզու և գրակ.	12	20	13	19	12	17	11	24		
Ռուսաց լեզու և գրակ.	9	8	11	5	7	11	11	11		
Թարգմանչական գործ	8	7	8	9	8	14	-	-		
Հեռակա ուսուցման համակարգ (ուսանողների թիվը՝ 125)										
Հայոց լեզու և գրակ.	-	13	-	22	-	18	-	12	-	15
Ռուսաց լեզու և գրակ.	-	5	-	8	-	7	-	9	-	16

Մագիստրատուրա. Առկա ուսուցման համակարգ (ուսանողների թիվը՝ 78)										
Ռուս գրականություն	3	2	5	1	-	-	-	-	-	-
Ռուսաց լեզու	2	1	3	3	-	-	-	-	-	-
Անգլերեն լեզու	8	3	5	7	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	5	1	5	3	-	-	-	-	-	-
Հայ գրականություն	3	2	5	2	-	-	-	-	-	-
Լրագրություն	5		3	1	-	-	-	-	-	-

Ծրջանավարտներ

Մասնագիտություն	Ծրջանավարտների թիվը՝ 153, այդ թվում՝ գերազանց՝ 31	
	Բակալավրիատ՝ 119 (գեր.դիպլոմ՝ 18)	Մագիստրատուրա՝ 34 (գեր.դիպլոմ՝ 13)
Հայոց լեզու և գրականություն	20 (2)	15 (4)
Լրագրություն (ժուռնալիստիկա)	10 (2)	4
Ռուսաց լեզու և գրականություն	22/8/	
Անգլերեն լեզու և գրականություն	35/6/	
Ռուսաց լեզու և գրական. (հնչակա)	16+2	
Հայոց լեզու և գրական. (հնչակա)	14	
Ռուս գրականություն		6/3/
Ռուսաց լեզու		6/3/
Անգլերեն լեզու		12/3/

Քննաշրջանների արդյունքները
Ձմեռային քննաշրջան

Մասնագիտություն, կրթական աստիճան	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուս. թիվը	Գերա-զան ցիկների թիվը	Առաջադիմություն %-ով
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն	43	-	2	100
1-ին	40	-	2	100
2-րդ	41	-	3	100
3-րդ	20	-	2	100
4-րդ				
Ընդամենը	144	-	9	100
Լրագրություն				
1-ին	13	-	-	100
2-րդ	13	-	-	100
3-րդ	7	-	1	100

4-րդ	10	-	2	100
Ընդամենը	43	-	3	100
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	17	-	-	100
2-րդ	17	-	-	100
3-րդ	19	-	-	100
4-րդ	22	-	9	100
Ընդամենը	75	-	9	100
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	32	-	3	100
2-րդ	32	-	-	100
3-րդ	29	-	-	100
4-րդ	34	-	1	100
Ընդամենը	127	-	4	100
Թարգմանչական գործ				
1-ին	14	-	-	100
2-րդ	17	-	1	100
3-րդ	22	-	-	100
Ընդամենը	53	-	1	100
Մազհատրատուրա				
Անգլերեն լեզու				
1-ին	11	-	1	100
2-րդ	12	-	3	100
Ընդամենը	23	-	4	100
Ռուսաց լեզու				
1-ին	3	-	-	100
2-րդ	6	-	1	100
Ընդամենը	9	-	1	100
Ռուս գրականություն				
1-ին	5	-	4	100
2-րդ	6	-	1	100
Ընդամենը	11	-	5	100
Հայոց լեզու				
1-ին	6	-	-	100
2-րդ	8	1	2	87.5
Ընդամենը	14	1	2	92.9
Հայ գրականություն				
1-ին	5	-	1	100
2-րդ	7	-	3	100
Ընդամենը	12	-	4	100
Լրագրություն				
1-ին	5	-	-	100
2-րդ	4	-	-	100
Ընդամենը	9	-	-	100
Վերակա բաժին				
Հայոց լեզու և				

գրականություն	13	1	-	92.3
1-ին	24	3	-	87.5
2-րդ	18	2	-	88.9
3-րդ	12	1	-	91.7
4-րդ	15	-	-	100
5-րդ				
Ընդամենը	82	7	-	91.5
Ռուսաց լեզու և գրականություն	6	-	-	100
1-ին	8	-	-	100
2-րդ	7	-	-	100
3-րդ	9	-	-	100
4-րդ	16	-	-	100
5-րդ				
Ընդամենը	46	-	-	100
ԸՆԴՀԱՆՈՒՐ	648	8	42	93.5

Ամառային քննաշրջան

Մասնագիտություն, կրթական աստիճան	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուս. թիվը	Գերա- զան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյուն %-ով
Բակլավարիատ				
Հայոց լեզու և գրականություն	43	-	3	100
1-ին	42	-	3	100
2-րդ	41	-	-	100
3-րդ	20	-	2	100
4-րդ				
Ընդամենը	146	-	7	100
Լրագրություն				
1-ին	13	-	-	100
2-րդ	13	-	1	100
3-րդ	7	-	2	100
4-րդ	10	-	1	100
Ընդամենը	43	-	4	100
Ռուսաց լեզու և գրականություն	17	-	-	100
1-ին	16	-	-	100
2-րդ	19	2	-	89.5
3-րդ	22	-	11	100
4-րդ				
Ընդամենը	74	2	11	97.3
Անգլերեն լեզու և գրականություն	32	1	-	96.9
1-ին	32	-	5	100
2-րդ	29	-	12	100
3-րդ	35	-	6	100
4-րդ				
Ընդամենը	128	1	23	99.2

Թարգմանչական				
գործ	15	-	-	100
1-ին	17	-	-	100
2-րդ	22	-	-	100
3-րդ				
Ընդամենը	54	-	-	100
Մագիստրատուրա				
Հայոց լեզու				
1-ին	6	-	-	100
Ընդամենը	6	-	-	100
Հայ գրականություն				
1-ին	5	-	3	100
Ընդամենը	5	-	3	100
Լրագրություն				
1-ին	5	-	2	100
Ընդամենը	5	-	2	100
Ռուսաց լեզու				
1-ին	3	-	-	100
Ընդամենը	3	-	-	100
Ռուս գրականություն				
1-ին	5	-	4	100
Ընդամենը	5	-	4	100
Անգլերեն լեզու				
1-ին	11	-	5	100
Ընդամենը	11	-	5	100
Վեպալա բաժին				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	13	-	-	100
2-րդ	22	1	-	95.5
3-րդ	18	5	-	72.2
4-րդ	12	-	-	100
5-րդ	15	-	-	100
Ընդամենը	80	6	-	92.5
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	6	-	-	100
2-րդ	8	-	-	100
3-րդ	7	1	-	85.7
4-րդ	9	-	-	100
5-րդ	16	-	-	100
Ընդամենը	46	1	-	97.8
ԸՆԴՀԱՆՈՒՐ	606	10	59	98.3

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 5:

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Ղազարյան Հասմիկ Սուրենի, բ.գ.թ., դոցենտ

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2017-2018 ուսումնական տարում իրականացրել են 1 պրոֆեսոր, 10 դոցենտ, որից մեկը՝ ժամավճարային աշխատող, 5 ավագ դասախոս:

1. Բաբայան Օֆելյա Ենոքի -բ.գ.թ., ԱրՊՀ պրոֆեսորի պաշտոնակատար
2. Մինասյան Սիլվա Աշոտի-բ.գ.թ. դոցենտի պաշտոնակատար
3. Յարամիշյան Միրա Բենիկի - մ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
4. Մինասյան Շողեր Մառլեստի-բ.գ.թ., դոցենտ
5. Խաչատրյան Նունե Գեորգիի - բ.գ.թ., դոցենտ
6. Սադյան Շուշանիկ Պավլիկի- բ.գ.թ., դոցենտ
7. Ավանեսյան Կարինե Համբարձումի - բ.գ.թ., դոցենտ
8. Զաքարյան Աիդա Սարգսի - մ.գ.թ.,դոցենտի պաշտոնակատար
9. Մարգարյան Լուսինե Գեորգիի, բ.գ.թ., դոցենտ
10. Հակոբյան Կարինե Աշոտի - ավագ դասախոս
11. Պողոսյան Ժենյա Ռոմայի- ավագ դասախոս
12. Հասրաթյան Ծովհնար Ալեքսանդրի - ավագ դասախոսի պաշտոնակատար
13. Սարգսյան Վեհանուշ Լևոնի - ավագ դասախոսի պաշտոնակատար
14. Հայրապետյան Լիանա Բենիկի - ավագ դասախոսի պաշտոնակատար

Ժամավճար՝ Սարգսյան Արմեն Յուրիկի - բ.գ.թ., դոցենտ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ:

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 10.695 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները և ուսումնական դասընթացները ծավալել և այժմ էլ ծավալում է արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության, պատմահամեմատական քերականության, բարբառագիտության, ընդհանուր և կիրառական լեզվաբանության, ոճաբանության, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի ուղղություններով:

Ամբիոնի դասախոսները տպագրել են հոդվածներ, կազմել են մասնագիտական դասընթացների ուղեցույցներ, ծրագրեր, թեմատեր, էլեկտրոնային տարբերակով դասախոսություններ:

Հրատարակությունների ցանկ

1.Սարգսյան Ա.Յու., **Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությունը «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի էջերում**, «Հայ լեզվաբանության XI միջազգային գիտաժողով» նվիրված Զոն Գրնայինի հիշատակին, 2-5 հոկտեմբերի, 2017. Հիմնադրությունների ժողովածու», Երևան, 2017, էջ 107-110:

2.Սարգսյան Ա.Յու.,Սարգսյան Լ.Յու., **Արցախի ազգագրությունը Երվանդ Լալայանի «Վառանդա» ուսումնասիրության մեջ**, «Մերոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2018, էջ 347-352:

3.Սարգսյան Ա.Յու., **Արցախի ժողովրդագիտությունը «СМОМІК (Сборник материалов для описания местностей и племен Кавказа)» հանդեսի էջերում**, «Գիտական ընթերցումներ, հոդվածների ժողովածու», ԱրՊՀ, Ստեփանակերտ, 2017, էջ 86-90:

4.Սարգսյան Լ.Գ., **Համադրության պատմալեզվաբանական հիմքերը Արցախի բնականություններում**, «Հայ լեզվաբանության XI միջազգային գիտաժողով» նվիրված Զոն Գրնայինի հիշատակին, 2-5 հոկտեմբերի, 2017. Հիմնադրությունների ժողովածու», Երևան, 2017, էջ 91-93:

5.Ղազարյան Հ. Ս., **Գրության և արտասանության գույքաձևությունները ժամանակակից հայերենում**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2017, էջ 265-273:

6.Ղազարյան Հ. Ս., **Փոխաբերության դերը 20-րդ դարի 80-90-ական թվականների արցախյան պոեզիայում**, «ԱրՊՀ գիտական ընթերցումներ», Ստեփանակերտ, 2018, էջ 3-11:

7.Բաբայան Օ.Ե., **Նախադասության անդամների համաձայնությունը գրաքարտում և լուսն-
րենում**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2017, էջ 232-240:

8.Մինասյան Ս.Ա., **Շրջատույթը կոմիտաս հակոբյանի ստեղծագործություններում**, «ԱրՊՀ
գիտական տեղեկագիր» Ստեփանակերտ, 1/2017 էջ 210-221:

9.Մինասյան Ս.Ա., **Արցախյան գոյապայքարի զեղարվեստականացման լեզվառճական
առանձնահատկությունները նրիտասարդ բանաստեղծուհիների գործերում**, «ԱրՊՀ գիտական
ընթերցումներ» Ստեփանակերտ, 2018, էջ 24-32:

10.Մինասյան Ս.Ա., **Մերո գործածված նույնարմատ բառային կառուցվածքային
տիպաբանությունը հովհ. Շիրազի «Թունդրակեցիները» պոեմում**, «Կանթեղ», Երևան, 2018, էջ
97-106:

11.Յարամիշյան Մ.Բ., **Հայրենասիրության, ազատության և խաղաղ ընտանիքի թեման կրտսեր
դպրոցի գործող դասագրքերում**, «ԱրՊՀ գիտական ընթերցումներ», Ստեփանակերտ, 2018, էջ
258-263:

12.Յարամիշյան Մ.Բ., Հակոբյան Հ.Խ., **Հայրենասիրական դաստիարակության ապահովումը
նախակրթարանում**, «ԱրՊՀ գիտական ընթերցումներ» Ստեփանակերտ, 2018, էջ 253-258:

13.Մինասյան Շ.Ա., **Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությունը «Պատմաբանասիրական
հանդեսի» էջերում**, «ԱրՊՀ գիտական ընթերցումներ» Ստեփանակերտ, 2018, էջ 32-37:

14.Խաչատրյան Ն. Գ., **Համեմատությունը ազատամարտի պոեզիայում**, «ԱրՊՀ գիտական
ընթերցումներ» Ստեփանակերտ, 2018, էջ 11-18:

15.Սաղյան Շ. Պ., **Արցախյան շարժման քաղաքական արտացոլումները գրական լեզվում**,
«ԱրՊՀ գիտական ընթերցումներ» Ստեփանակերտ, 2018, էջ 41-46:

16.Սաղյան Շ. Պ., **Պատմական ոճավորումը հովհաննես Շիրազի «Տիգրան Մեծի վիշտը և
հավերժությունը» պոեմում**, «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2018,
էջ 106-113:

17.Զաքարյան Ա.Ա., **Ստեղծագործականությունը՝ ուսումնական գործընթացի կարևոր պայման**,
«Մերոպ Մաշտոց համալսարանի գիտաժողովի հոդվածների ժողովածու. 27-29 հոկտեմբերի»,
Ստեփանակերտ, 2017, էջ 412-418:

18.Հակոբյան Լ.Ա., **Պատկերավորման միջոցները Սոկրատ Խանյանի մարտական պոեզիայում**,
«ԱրՊՀ գիտական ընթերցումներ» Ստեփանակերտ, 2018, էջ 18-24:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Զրույցներ լեզվաբանության արդիական խնդիրների շուրջ:
2. Դասախոսների կողմից գիտական սեմինարների անցկացում և քննարկում /8 գիտական սե-
մինար, 10 գիտական ընթերցում/:
3. Մասնագիտական հոդվածների քննարկումներ:
4. Գիտական սեմինարների կազմակերպում Ստեփանակերտի բոլոր դպրոցների հայոց լեզվի և
գրականության մեթոդավարումների հետ:
5. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:
6. Մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներ:
7. Ուսանողների հետ տարվող անհատական խորհրդատվություններ:

Համագործակցություն

Համագործակցություն՝ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, Երևանի պետա-
կան համալսարանի, Հայաստանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալ-
սարանի, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի
հետ:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան
պետական համալսարանի, ՌԳԱ լեզվաբանության ինստիտուտի համատեղ կազմակերպած հայ
լեզվաբանության XI միջազգային գիտաժողով՝ նվիրված Զոն Գրեպինի հիշատակին (1937-2016)
/2 զեկուցում/:

2. ԱրՊՀ-ում կազմակերպված Ղարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված գիտաժողով /8
զեկուցում/:

3. Մերոպ Մաշտոց համալսարանում կազմակերպված «Կովկասը՝ մեր ընդհանուր տուն»
միջազգային գիտաժողով /1 զեկուցում/:

4. Հայաստանի Խ. Արուսեանի անվան պետական մանկավարժական համալսարանում կազմակերպված «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի հիմնահարցեր» թեմայով հանրապետական միջբուհական գիտաժողով /1 զեկուցում/:

Վերահսկողական աշխատանքներ

1. Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում:
2. Դասախոսների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում:
3. Ներամբնակային դասախոսների անցկացում և քննարկում /8 դասախոս/:
4. Թեմաների, հարցաշարերի, տոմսերի փորձաքննություն և դրանց համապատասխանելիության վերահսկում ստուգումների և քննությունների համար սահմանված ընթացակարգին,
5. Ավանդական ստուգարքների անցկացման վերահսկում՝ ըստ դրանց անցկացման ու գնահատման մեթոդաբանության:
6. Ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում՝ ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի:
7. Դասընթացային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1. Միջոցառում՝ նվիրված Վ.Քոսյանի 90-ամյակին, Օ.Բաբայանի 70-ամյակին, Ս.Մալխասյանի ծննդյան 160-ամյակին, Ս.Պալասանյանի ծննդյան 180-ամյակին, արձակագիր Կ.Դանիելյանի 70-ամյակին:
2. Ներֆակուլտետային միջոցառում՝ նվիրված մայրենիի օրվան:
3. Դաս-միջոցառում՝ ուսանողների և աշակերտների մասնակցությամբ:
4. Միջֆակուլտետային առարկայական օլիմպիադա՝ «Անադարտ մայրենին՝ ինքնության երաշխավոր» խորագրով:
5. Դաս՝ «Տիգրանակերտում»:

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Խաչատրյան Շուշան Ռոբերտի, բ.գ.թ., դոցենտ

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2017-2018 ուսումնական տարում իրականացրել են 3 պրոֆեսոր, 6 դոցենտ, որից մեկը՝ ժամավճարային աշխատող, 4 ավագ դասախոս:

1. Խանյան Սոկրատ Աղալարի- բ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար
2. Մուսայելյան Հովիկ Գաստելոյի բ.գ.թ., ԱրՊՀ պրոֆեսորի պաշտոնակատար
3. Աթայան Անահիտ Միքայելի-բ.գ.թ., ԱրՊՀ պրոֆեսորի պաշտոնակատար
4. Ավանեսյան Նարինե Արարատի- բ.գ.թ., դոցենտ
5. Խաչատրյան Սիլվա Եղիշեի-բ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
6. Բադասարյան Սիրուն Սարուխանի- բ.գ.թ., դոցենտ
7. Բալայան Զինաիդա Վանիկի-բ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
8. Առաքելյան Վալյա Արտաշեսի-բ.գ.թ., ավագ դասախոս
9. Լալայան Գայանե Ստեփանի- ավագ դասախոսի պաշտոնակատար
10. Սառաջյան Զարինե Գարեգինի-բ.գ.թ., ավագ դասախոսի պաշտոնակատար
11. Աբրահամյան Օֆելյա Ներսերի- դասախոս

Ժամավճարային հիմունքներով աշխատողներ

1. Ղուլյան Արտակ Կամոյի- բ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
2. Գաբրիելյան Կիմ Եղիշեի- բ.գ.թ. ավագ դասախոսի պաշտոնակատար
3. Ավետիսյան Հրայր Համլետի- ասիստենտ
4. Բալայան Սամվել Կիմայի- ասիստենտ
5. Բադրյան Վարդգես Բորիսի- ասիստենտ
6. Բեգլարյան Արտակ Արտյոմի- ասիստենտ
7. Դոլոխանյան Անուշ Վաղիմի- ասիստենտ
8. Մարտիրոսյան Համլետ Անդրանիկի- ասիստենտ
9. Պետրոսյան Սաթենիկ Վալերիի- ասիստենտ

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 8361 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքների հիմնական ուղղություններն են՝ հայ գրականությունը և նրա դասավանդման մեթոդիկա, արտասահմանյան գրականություն, լրագրություն: Գրականության ուղղվածությամբ ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները և ուսումնական դասընթացները ծավալում է հայ գրականության պատմության, սփյուռքահայ գրականության, արտասահմանյան և ժուռ գրականության պատմության, գրաքննադատության պատմության, գրականագիտության և գրականության դասավանդման մեթոդիկայի ուղղություններով:

Լրագրության ուղղվածությամբ ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները և ուսումնական դասընթացները ծավալում է ՁԼՄ տեխնիկայի, լրագրության էթիկայի և ժանրերի, ռադիոժուռնալիստիկայի, հեռուստաժուռնալիստիկայի, ռազմական լրագրության, մշակութային լրագրության, հայ մամուլի պատմության, համացանցային ՁԼՄ-ների, մեդիաազդեցության ժամանակակից տեսությունների, մեդիայի և քաղաքական տեխնոլոգիաների, հանրային կապերի և հաղորդակցություն, մեդիա և մշակույթ փոխհարաբերությունների հիմնական ուղղություններով:

Հաշվետու ժամանակահատվածում, նկատի առնելով մանկավարժական և մասնագիտական կատարելագործման տեղական պահանջարկները, առկա և հեռավոր ուսուցման բակալավրիատի ուս. պլաններում կատարվել են մասնակի վերափոխություններ, մշակվել նոր դասընթացների ծրագրեր:

Ամբիոնի դասախոսական ներուժի գիտամանկավարժական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, բարձրորակ կրթություն ապահովելու նպատակով կազմվել է առարկայական դասընթացների էլեկտրոնային դասախոսությունների փաթեթ: Վերահամարվել է ամբիոնի փաստաթղթային բազան. իրականացվել է թեմատիկ պլանների, առարկայական բնութագրերի, հարցաշարերի և տոմսերի վերակազմում: Խրախուսելով կրթության և գիտության ոլորտում ժամանակակից մեթոդների կիրառումը՝ ամբիոնում հետևողականորեն աշխատանք է տարվել ամբիոնի դասախոսական ներուժի գիտամանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացման, մանկավարժահոգեբանական անհրաժեշտ հմտությունների դրսևորման ուղղությամբ:

Ամբիոնի դասախոսները տպագրել են հոդվածներ, կազմել են մասնագիտական դասընթացների ուղեցույցներ, ծրագրեր, թեստեր, ստեղծվել է էլեկտրոնային շտեմարան:

Հրատարակությունների ցանկ

